Հայտարարություն

«Վիզուալ Հայաստան» զարգացման հիմնադրամը «Աշխարհացույց» կրթական ծրագրի շրջանակներում հայտարարում է «Աշխարհացույցի մենթորության կրթաթոշակ 2024» ծրագրի մեկնարկը:

Ծրագրի նպատակն է՝ ձևավորել «Աշխարհացույց» կրթական հարթակից օգտվելու (կայքը https://brainograph.com/), հարթակի օգնությամբ ինտերակտիվ դասեր կազմակերպելու հմտություններ ունեցող, արդի մեթոդամանկավարժական նոր կարողություններ զարգացնող և սեփական փորձը գործընկերներին փոխանցելու կարողություններով օժտված ուսուցչական համայնք:

Ծրագրին կարող են դիմել Հայաստանի Հանրապետությունում պատմություն, հասարակագիտություն, աշխարհագրություն դասավանդող ուսուցիչները (ընտրվելու է 20 ուսուցիչ Երևանից և ՀՀ մարզերից): Դիմելու վերջնաժամկետը ս.թ. մայիսի 15-ն է: Դիմելու համար հարկավոր է լրացնել հետևյալ հարցաշարը:

Ուշադրություն: Նախնական փուլ անցած ուսուցիչները հաջորդիվ կանցնեն հարցազրույցի փուլ, որից հետո կընտրվի 20 ուսուցիչ: Մենթորական ծրագրի պահանջները բավարարելու դեպքում ընտրված ուսուցիչները կստանան կրթաթոշակ, իսկ ծրագիրը հաջողությամբ ավարտելու դեպքում՝ նաև **«Աշխարհացույց» ծրագրի մենթոր-ուսուցչի վկայական:**

Ծրագրի տևողությունը՝ վեց ամիս

- «Աշխարհացույց» կրթական հարթակի գործիքակազմի, մեթոդամանկավարժական կարողությունների զարգացման վերապատրաստումներ՝ երկու ամիս (հունիս, հուլիս)
- Դասապրոցեսի կազմակերպում «Աշխարհացույց» կրթական հարթակով՝ երեք ամիս (սեպտեմբեր-նոյեմբեր)
- Ծրագրի ամփոփում (դեկտեմբեր)

Մանրամասներին կարող եք ծանոթանալ Ծրագրի հայեցակարգում:

Ծրագրին դիմելու համար անհրաժեշտ փաթեթը.

- լիարժեք լրացված հարցաշար,
- մոտիվացիոն նամակ՝ «Ինչպե՞ս են նոր տեխնոլոգիաները և ժամանակակից մանկավարժական մոտեցումները վերափոխում կրթությունը» խորագրով,
- «Աշխարհացույց» հարթակի միջոցով արված դասերի լուսանկարներ, տեսանյութեր, որոնք պետք է ուղարկել mentorship@visualarmenia.org էլհասցեին՝ «Թեմա» բաժնում գրելով ծրագրի անվանումը՝ «Աշխարհացույցի մենթորության կրթաթոշակ 2024»,
- եթե առկա է մասնակցություն այլ կրթական ծրագրերի, ապա՝ հավաստագրերի պատճենները:

«Աշխարհացույցի մենթորության կրթաթոշակ 2024»
ՈՒՍՈՒՑՉԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԶՈՐԱՑՄԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Ներածություն. խնդրի սահմանում

Որակյալ կրթության ապահովումը մանկավարժների հիմնական գործառույթն է, իսկ մանկավարժական գործունեությունը ենթադրում է ոչ միայն գիտելիքի և մասնագիտական կարողությունների շարունակական բարելավում ու զարգացում, այլև կրթական ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման տիրապետում:

Կրթական նորարարությունների և դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառումը հանրակրթության ոլորտում դարձել է շատ ավելի պահանջված: «Աշխարհացույց» կրթական նորարարական հարթակի փորձարկման փուլում (2022 թ. մարտից 2023 թ. նոյեմբեր) հանդիպել ենք ուսուցչական համայնքում առկա մասնագիտական հետևյալ խնդիրներին.

- տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման հմտությունների պակաս,
- դասավանդման և ուսուցանելու հնացած ու անարդյունավետ մեթոդներ,
- կրթական գործընթացներում միջառարկայական, համակողմանի, համակարգային մոտեցումների բացակայություն,
- ինտերակտիվ և ստեղծագործ բովանդակության բացակայություն,
- համագործակցային աշխատանքի ոչ բավարար հմտություններ ու փորձառություն:

Խնդրի լուծում. մենթորությունը որպես կարողությունների զարգացման և տարածման ուղի

«Աշխարհացույց» կրթական նորարարական հարթակի ճանաչման ու գործածման վերապատրաստումների ընթացքում ձևավորվել է մասնագիտական համայնք, որն ունի զարգանալու մեծ ներուժ: Կան անհատ-ուսուցիչներ, որոնք առանձնանում են ոչ միայն իրենց մասնագիտական կարողություններով, այլև՝ սովորելու ու իրենց գործընկերներին սովորեցնելու պատրաստակամությամբ: Մեր նպատակն է ձևավորել հենց այս անհատների ներուժի վրա խարսխված մենթորական համայնք՝ կրթության շարունակական զարգացումն ապահովելու նպատակով: Ծրագիրը նախաձեռնել ենք՝ հավատացած լինելով, որ կրթական ոլորտում ցանկացած նորարարության հաջող ներդրման ճանապարհը մարդկային կարողությունների զարգացումն է:

Հաջողված օրինակներ. ունենք պատմություն դասավանդող 20 ուսուցիչ, որոնք մասնակցել են 2023 թ. համանուն ծրագրին, հաջողությամբ զարգացրել իրենց կարողությունները՝ ձեռք բերելով նոր հմտություններ, և ծրագրի ավարտից հետո ստացել մենթոր-ուսուցչի հավաստագիր:

Այժմ այս ուսուցիչներն ակտիվ ներգրավված են իրենց և Հանրապետության տարբեր բնակավայրերից գործընկեր ուսուցիչներին ստացած գիտելիքները փոխանցելու գործում՝ իրականացնելով առցանց և առկա վերապատրաստումներ, աշխատաժողովներ և այլն:

Ո՞վ կարող է դառնալ «Աշխարհացույցի» մենթոր-ուսուցիչ:

«Աշխարհացույց» ծրագրի մենթոր-ուսուցչից պահանջվելու է.

- սովորել,
- կիրառել,
- սովորեցնել,
- դաս պլանավորել,
- նախագծային աշխատանք կատարել,
- կիսվել ստացված գիտելիքներով և հմտություններով,
- առաջնորդել:

Այլ կրթական ծրագրերում ներգրավվածությունը և/կամ կամավորական աշխատանքը կդիտվեն որպես առավելություն:

Մենթորության վեցամսյա ծրագրի մասնակից ուսուցիչը.

- կստանա մասնագիտական խորհրդատվություն, կխորացնի ՏՀՏ (տեղեկատվական և հեռահաղորդակցության
- տեխնոլոգիաներ) գիտելիքները,
- կտիրապետի «Աշխարհացույց» կրթական հարթակին,
- կսովորի իրականացնել դասի պլանավորում «Աշխարհացույց»-ով,
- կհմտանա դասավանդման նորարարական մեթոդների մեջ,
- կսովորի իրականացնել նախագծային ուսուցում,
- կմիանա ուսուցչական առաջադեմ համայնքին:

Ինչպե՞ս դառնալ «Աշխարհացույց» ծրագրի մենթոր-ուսուցիչ.

→ **Ծրագրի մեկնարկին մենթոր-ուսուցչի թեկնածուն պետք է**

- տիրապետի որոշակի ՏՀՏ գիտելիքների,
- դասապրոցեսում կիրառի «Աշխարհացույց» կրթական հարթակը,
- տիրապետի հանրակրթության պետական չափորոշչով սահմանված
- առարկայական ծրագրերին,
- ունենա առաջնորդության և հաղորդակցության հմտություններ:

→ **Ծրագրի ընթացքում մենթոր-ուսուցչի թեկնածուն պետք է.**

- մասնակցի Ծրագրի հեռավար դասընթացներին,
- պարտաճանաչորեն կատարի դասընթացի ղեկավարի հանձնարարությունները:

→ **Ծրագրի ավարտին մենթոր-ուսուցիչը պետք է.**

- տիրապետի ժամանակակից կրթական տեխնոլոգիաների (օրինակ՝ Brainograph, Google հարթակ և այլն),
- տիրապետի դասավանդման նորարարական մեթոդների (օրինակ՝ համագործակցային ուսումնառության, շրջված դասարան, հետազոտության վրա հիմնված ուսումնառություն և այլն),
- մշակի ու ներկայացնի օրինակելի դասեր «Աշխարհացույց» հարթակով:

Նպատակ և արդյունք

«Աշխարհացույց» կրթական նորարարական ծրագրի շրջանակներում ուսուցիչներին մենթորական աջակցություն ցուցաբերելու նպատակն է՝ նպաստել կրթության որակի և արդյունավետության բարձրացմանը, որի արդյունքում կձևավորվի «Աշխարհացույց» կրթական հարթակից օգտվելու (կայքը՝ https://brainograph.com/), հարթակի օգնությամբ ինտերակտիվ դասեր կազմակերպելու հմտություններ ունեցող, մեթոդամանկավարժական նոր կարողություններ զարգացնող ուսուցչական համայնք: Այս համայնքը կձևավորվի այն ուսուցիչներից, որոնք ստանձնում են մրցունակ սերունդ կրթելու առաքելությունը՝ քայլելով ժամանակի պահանջներին համընթաց, շարունակաբար զբաղվելով մասնագիտական կարողությունների կատարելագործմամբ ու ապահովելով որակյալ ուսուցում:

Ակնկալվում է, որ մենթորական ծրագիրը կնպաստի «Աշխարհացույց» կրթական նորարարական հարթակի ճանաչմանը և գործածմանը, ծրագրի արդյունավետության բարձրացմանը, որի ընթացքում և արդյունքում մենթոր-ուսուցիչը.

- կդառնա «Աշխարհացույց» ծրագրի կրողն ու տարածողը՝ չափելի արդյունքերով,
- կաջակցի իր գործընկերներին՝ տիրապետելու «Աշխարհացույց» կրթական հարթակի բոլոր հնարավորություններին,
- կառաջնորդի իր գործընկերներին դեպի 21-րդ դարին համահունչ ուսուցում և դասավանդում,
- կձևավորի լայն աշխարհայացքով, պատմական մտածողություն և քննադատական վերլուծական կարողունակություններ ունեցող աշակերտական համայնք:

Ծրագրի ավարտին որոշ մենթոր-ուսուցիչներ՝ ըստ արդյունքների, «Աշխարհացույց» ծրագրում աշխատանքի անցնելու հնարավորություն կստանան:

Ծրագրի ավարտին «Աշխարհացույց» ծրագրի մեկ մենթոր-ուսուցիչ պետք է աշխատի առնվազն 50 այլ ուսուցչի հետ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մենթորական ծրագրի հաջող իրականացումն ու ընդլայնումը մեծապես կնպաստեն մրցունակ ուսուցչական համայնքի ձևավորմանն ու առնվազն այս ծրագրի շրջանակներում նրանց կայուն զարգացմանը: